




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Կրկին չեղանկարում
թեան մասին: Նամակ Գանձակից: Նամակ Բա-
ղուց: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Բաղդադի:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ:
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՏԵՂԵԿԱՅՈՑՑ:—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ: Մի տարի Շվեյցարիայում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԿԻՆ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գիւղատնտեսական ընկերութեան մարտի 27-ի
ընդհանուր ժողովում, հերթական հարցերը վեր-
ջացնելուց յետոյ, ժողովը զբաղվեցաւ պ. Լեւոնի
չեղանկարում թեան զարգացման համար ներկա-
յայցած նախագծի քննութեամբ: Պարոնի նախա-
գիծը բաղկացած է 14 յօդուածից: Այդ մի պատ-
ճառ էր անմիջապէս ուղարկելու զարգացման
գործի վրայ, թէ և եղան ակնարկողներ, որ ընկե-
րութիւնը վաղուց է մտածում այդ մասին: Այդ
նախագիծը առիթով ժողովի մէջ երկու տեսակ
կարծիքներ յայտնվեցան: Պ. Լեւոնի առաջարկած
միջոցների հետ ժողովականների մեծ մասը չը հա-
մաձայնեցաւ Թոնիկով պ. Լեւոնի նախագիծի
միւս կէտերը, որոնք երկրորդական են, և որոնք
վերաբերում են սերմի պահպան և առողջապա-
հական զանազան ձեւերին, որոնք ի հարկէ օգտա-
կար և համակրելի են, ժողովը կանգ առաւ այդ
նախագծի սկզբի երկու կէտերի վրայ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՏԱՐԻ ԾՎԵՑՏԱՐԻԱՅՈՒՄ

ՅԵՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ ճշմարիտ, մաքրասիրութիւնը հասնում է
Շվեյցարիայի մէջ մինչև անգամ ծիծաղելի ծայ-
րայեղութեանը: Ուրախ երեկոյան պառկելով
անկողնին մէջ, ես ամեն անգամ սարսափով էի
մտածում, որ միւս օրը շաքարէ զէնքով, ու-
րեմն դեռ ժամը 5-ին առաւօտեան ինձ դարձե-
նելու է մի ընդհանուր դժոխային աղմուկ: Այս,
ամեն շաքարէ զէնքով Շվեյցարիայում մարդը կարծում
է թէ պատերազմի դաշտումն է գտնվում. ամեն
կողմից՝ գաւիթից, այգիից, փողոցից, չըջալայ
աների գաւիթներից ու բաղնիքներից լսվում է
սարսափելի հրացանաձգութեան պէս մի անասե-
լի և ընդհանուր դողդոց: Եւ դեռ, ընթերցող,
դա ինչ բան է. ամեն անկողնից այդ օրը աղախին-
ները դուրս են բերում վարչական, կարգապահ,
չորեր, կահ-կարասիներ, վարչապետներ, վերջապէս,
ինչ որ կայ չը կայ տան մէջ և այդ բոլորը թափ
են տալիս, առանձին չինած փայտերով անողորմ
կերպով զարկում այդ բոլոր առարկաների վրայ:
Իսկ յատակների սրբելը, պատուհանների ապակի-
ների մաքրելը, սենեակների փայտեայ պատերի
ջրով լուսնալը, կօրիքօրների ու սանդուխտների
մաքրելն ու լուսնալը, մոմով կամ տեղաւորելն
ձէլով քանելը,—եթէ թող տաք միայն, ձեռն աղա-
խին պատրաստ կը լինի ամեն օր էլ անկողնի
ընդմէջ մօտ ամեն բան անդադար մաքրելը մի տե-
սակ կըլլէ և դարձեւ և նրանք մաքրում, սրբում,
խտակում, լուսնալ, թողը թափ են տալիս մի
տեսակ տենդային կատաղութեամբ. իրանց ամբողջ
կենսութեան տան տիկիներն ու աղախիները աշխա-
տանքի ու մաքրելու մէջ են անցկացնում: Կարե-
լի է ասել, որ մաքրելով, սրբելով ու թափ տա-
լով են մաշում իրանց իրեղէնները: Թէ և այդ ան-
ընդհատ դողդոցը, այդ մշտական մաքրելն ու
թափ տալը շատ յանգի է թոյլ ներկներով, հի-
ւանդ մարդու համար, բայց ուրիշ կողմից մարդը
հաւատացած է լինում որ այդ մաքրասիրութեան

ա) Որդին սերմ պատրաստելու և վաճառելու լինի
կառավարութեան անմիջական հսկողութեան ներ-
քայ և կառավարութեան թոյլտուութեամբ:
բ) Ոչ ոք գիւղացիներից իրաւունք չունենայ
սերմ պատրաստելու, բացի նրանցից, որոնք դրա
համար կը ստանան օրինաւոր իրաւունք:
Մեծամասնութիւնը այն կարծիքը յայտնեց, որ
չէ կարելի արգելել գիւղացիներին սերմ պատ-
րաստելը, և որ չեղանկարում թեան կանոնաւո-
րութեան համար, առանց դիմելու կառավարու-
թեան հսկողութեանը, պէտք է ձեռք առնել դրա-
կան և խելացի միջոցներ: Մի քանի անձինք մի-
այն այն կարծիքի էին, թէ պէտք է անպատճառ
ոստիկանութեան հսկողութեան տակ դնել գործը:
—Այդ երկու տեսակ կարծիքների վերաբերու-
թեամբ վիճաբանութիւնները շատ երկարացան:
Նախագահ պ. Խաթիսով առաջարկեց ընտրել մի
յանձնաժողով, որ քննէ պ. Լեւոնի նախագիծը,
և առհասարակ որոշէ, թէ ինչ միջոցներով կարե-
լի է և պէտք է չեղանկարում թեանը դնել կանո-
նաւոր դրութեան մէջ: Ընտրվեցաւ մի յանձնաժո-
ղով համարեա այնքան անձինքներից բաղկացած,
որքան անդամներն ունէր ընդհանուր ժողովին:
Յանկալով յանձնաժողովի և ընկերութեան աւելի
ստիկանութիւն և եռանդ այդ կարևոր գործի աշո-
ղութեան համար, մենք մեր կողմից հարկաւոր
ենք համարում մի քանի խօսք ասել, որի վրայ և
հրաւիրում ենք առանձնապէս յանձնաժողովի
անդամներին ուղարկել: Անհրաժեշտ է, որ
վերջին քսան տարեկան ընթացքում կողմասեան
չեղանկարում միանգամայն ընկաւ, գլխա-

ւորապէս Նապօնիայի և Խորասանի սերմերի մէջ
տարածված հիւանդութիւնների պատճառով: Շե-
ղանկարում թեան յաջողութեան համար երկու
գլխաւոր պայման կայ. ա) լաւ սերմ, և բ) չեղա-
մի կանոնաւոր պահելը:—Հալան նշանակութիւն
ունի լաւ սերմը, որի ապացոյց այն կարող է լի-
նել, որ վերջին տարիները իտալական սերմի
մուտք գործելը մեր երկրի մէջ լաւ յոյսեր է տա-
լիս մեր չեղանկարում թեան, որոնք երկար տարի-
ներ իրանց աշխատանքը զուր էին կորցնում:—Ոչ
մի ուստիկանական միջոցով չէ կարելի գիւղացի-
ների սերմ պատրաստելու սովորութեան առաջն
առնել. այդ անկարելի բան է և նպատակայար-
մար չէ: Գիւղական իւրաքանչիւր պարագմունքի
աշխատութիւնը այն բանի մէջ է, որ ինքը գիւղա-
ցին համոզված լինի իր ձեռք առած միջոցների
լաւութեան մէջ, եւ ինքը գիւղացին գիտակցաբար
ձեռք առնէ այս կամ այն միջոցը: Ներկայացրեք
գիւղացուն լաւ սերմի նմուշ, որի լաւութիւնը
խառնի ձեռք բերել սերմը, որքան որ իր նիւթա-
կան ոյծերը թող կը տան:—Ինքն ըստ ինքեան
լաւ և գին կողմից մատուցել ցելուէր սերմի
մուտք գործելը ամենալաւ գրաւական է վատ սեր-
մի գործածութիւնը արմատախիլ անելու: Բայց
ընկերութիւնը ինքը կարող է նոյն նպատակի հա-
մար ուրիշ միջոցներ ձեռք առնել: Որինակի հա-
մար, մեծ օգուտ կը բերվէր գործին, եթէ ոչ ոք
երկրի մէջ իրաւունք չունենար սերմ վաճառե-
լու, առանց ունենալու Գիւղատնտեսական ընկե-
րութիւնից օրինաւոր վկայագիր: Ընկերութիւնը

կարող է այս դէպքում կատարել կոնտրոլ անող
մի հիմնարկութեան դերը: Այդ տեսակ կօնտրոլ
անող, կօմպետենտ ընկերութեան նշանակութիւնը
Խորասանում շատ որոշ է լինում և յայտնի է:
Ընկերութիւնը կարող է որոշել թէ արտասահմա-
նեան ֆիրմաներից որը յուսալի է, և նա կարող
է առաջարկել մեր սերմ բերողներին դիմելու լաւ
ֆիրմաներին: Որինակ, Արուսիս վաճառական-
ները կարող են շարունակել սերմ վաճառելը, մի-
այն թէ նրանց սերմը քննէր Գիւղատնտեսական
ընկերութիւնը և տար արժանաւորին հարկաւոր
վկայագիր: Նոյն բանը կարելի է անել և Նուրու-
կողմերում և ամենայն տեղ: Եւ եթէ Կովկասում
կան մասնագէտ անձինք, որոնք կամենում են
իրանց պատրաստած սերմը վաճառել, թող նրանք
ևս ստանային ընկերութեան համաձայնութիւնը,
ինչպէս դրա օրինակը արդէն եղել է: Պէտք է
զրաւ վրա և այն աւելացնել, որ Գիւղատնտեսա-
կան ընկերութիւնը իր կողմից պէտք է աշխատե-
տարեցտարի պատրաստել մեծ քանակութեամբ
լաւ ցելուէր սերմ և այդ սերմը տարածել: Կօնտ-
րոլ իրաւունքը վաճառվող սերմի վերաբերմամբ
կարելի է այդպիսով տալ Գիւղատնտեսական ըն-
կերութեանը: Շեղանկարում կանոնաւոր պահելու հա-
մար պէտք է երկրի մէջ որքան կարելի է շատա-
նան կանոնաւոր չեղանկարները: Հիմնել կանոնա-
ւոր օրինակելի չեղանկարներ, տարածել չեղան-
կարութեան մասին ժողովրդական լեզուով բո-
չիւրներ,—այդ Գիւղատնտեսական ընկերութեան
պարտաւորութիւնն է: Ունենալ մասնագէտ-ան-
դամներ, որոնք պարտաւոր են երկրի զանազան կողմերը,

կատարում, այստեղ նոյն աշխատանքը նոյնքան
աշխատութեամբ կատարում է մի մարդ: Ամբողջ տու-
նը, ամբողջ բնակարանը կամ դերձաստանը կա-
ռավարվում է մի հատ աղախնով, որ մի և նոյն
ժամանակ և խոհարարութիւն և աղախնութիւն է
անում, շատ անգամ ամենամանրագիշտ լուսացը
էլ է անում տան մէջ: Իսկ կացած բնակարանում,
սրտեղ տէրերի հետ միասին հաշուելով, ութ հոգի
էինք կենում, մեկ բոլորիս ծառայում էր մի հատ
աղախին: Մարդ, այդպէս էր նրա անունը, մի
դեռ շատ երիտասարդ, միշտ առողջ, զուարթ,
հաստիկ, կարմրաթուշ աղջիկ, որ Գարաբիւնդէն
կանտոնից էր, առաւօտը դեռ լուսը չը բացված,
վեր էր կենում, մաքրում, սրբում, լուսնալում, ա-
ւելում էր, յետոյ մեկ բոլորիս նախաճաշիկ էր
բերում իւրաքանչիւրին իր սենեակը, բոլոր ութ
թէ ինչ սենեակները հաւաքում, տան տիկնոջը
խոհանոցում օգնում էր, տանից դուրս մեր ա-
մենքիս այլ և այլ յանձնարարութիւններ կատա-
րում, ճաշին ընդհանուր սեղանին մեկ բոլորիս
ծառայում, ճաշից յետոյ խոհանոցի բոլոր աման-
ները լուսնալում, բոլոր սենեակներին ջուր բերում,
երեկոյեան բոլոր սենեակները նորից կարգի բե-
րում, ութ հոգու ընթերցել պատրաստելու համար
խոհանոցում տան տիկնոջը օգնում, բոլոր լամ-
պանները մաքրում, նալթ անում, իւրաքանչիւր
սենեակը իր լամպան էր բերում ու վառում էր,
նորից ընթերցել ժամանակ մեկ բոլորիս ընդհա-
նուր սեղանի մօտ սպասաւորում, ընթերցել յետոյ
նորից բոլոր ամանները լուսնալում, ամբողջ խոհա-
նոցը մաքրում և, վերջապէս, երեկոյեան ժամը
տան և կէսին իր սենեակին էր գնում ու պառ-
կում: Այդտեղ հարկաւոր է նկատել, որ իւրա-
քանչիւր աղախին վարձվելիս պահանջում է իր
համար առանձին սենեակ, փոյթ չէ եթէ սե-
նեակը փոքրիկ և ցուրտ լինի, վատարան չունենայ
ու ձմեռ ժամանակ երբեք չը տաքացվի, միայն
թէ սենեակում լինի մի լաւ, փափուկ, տաք և
յարմար անկողին:

Նոյն երեկոյից, այսինքն ժամանակի խնայողու-
թիւնը, սովորութիւն ձեռքբերող կրկնապատիկ գործ
կատարելը նկատվում է ոչ թէ միայն տան տըն-
տեսութեան մէջ, բայց և ամեն տնտեսութեան
մէջ, լինի նա հասարակական թէ մասնաւոր: Մը-
տէք մագաղաններ, խանութներ, մտէք փոստա-
տուն, հեռագրատուն, բանկային կանոնաւորներ և

այլն,— և դուք կը համոզվէք, որ նոյն գործը, որ
մեզանում կատարելու համար հարկաւոր կը լի-
նէին երկու, երեք հոգի,—նոյն գործը Շվեյցարիա-
յում ճիշդ և արագ կատարելու համար բաւական
է մի հոգի, շատ անգամ մի կին:
Որքան շվեյցարացիք գիտեն խնայել ժամանակը,
փողը, աշխատանքը ինչ աստիճանի գործնականու-
թեան են հասել նրանք և գիտեն իրանց ձեռքի
տակ եղած ամեն ոյծից օգտվել, դրան ապացոյց
թող լինի հետեւեալը: Բոլոր փողոցներում ջրանցը
է անցկացրած, յանկարծ դուք կը տեսնէք որ մի
մարդ բաց է անում մի տան առջև ջրանցի լու-
սամուտը, ամրացնում է ջրանցի խողովակին
կաշուց կամ կառուցվելից չինած մի հաստ խողո-
վակ, տանում է խողովակի միւս ծայրը տան դա-
ւիթը և անմիջապէս ամրացնում է նրան մի փոք-
րիկ մեքենային, որ դրված է տան գաւիթի մէջ
տեղ: Խողովակով անցնող ջրի հոսանքի ոյծը
սկսում է պտտացնել մեքենայի վրա եղած մեծ
անիւ, որ իր կողմից շարժման մէջ է գցում մե-
քենայի վրայ յարմարեցրած սղոցը: Այդ սղոցը
տակ դրվում է փայտ,— և ասա մի քանի րոպէ-
ում տան տնտեսութեան համար անհրաժեշտ
փայտի ահագին քանակութիւնը ողողած պատ-
րաստ է: Այդ փոքրիկ մեքենան, որ ջրանցի ջրի
ոյծով շարժման մէջ է գցվում, բանում է անա-
սելի արագութեամբ, սղոցում է փայտը մանր,
կոկիկ կտորներ, և շատ կարճ ժամանակում պա-
տրաստում է այդպիսով տան տնտեսութեան հա-
մար վառելիքի մեծ պաշար: Այնուհետեւ ամբողջ
փողոցի հարեան տները հերթով են անցկացնում
իրանց մօտ ջրանցի ջուրը նոյն նպատակով և
ամենքը հաւասարապէս օգտվում են ջրի ոյծից:
Վառելու փայտը սղոցում են շատ մանր կե-
տորների վրա և դրանք գործ են անվում թէ խո-
հանոցի և թէ տնտեսական վառարաններում, ո-
րոնք շատ գործնական, խնայողական կերպով են
չինված, վառվում ու տաքանում են փայտի ան-
նշան քանակութեամբ, շատ անգամ նոյն իսկ
փայտի տաշեղներով, բայց այնու ամենայնիւ հա-
րաւոր minimum-ին հասցրած վառելիքով արտա-
դրում են տաքութեան նոյնքան մեծ քանակու-
թիւն, որքան մեր երկրներում և Ռուսաստա-
տանում վառելիքի ահագին քանակութիւն պահան-
ջող վառարանները:
(Կը շարունակվի)

ուսումնասիրելն երկրի շերտապաշտութեան գործը, ցոյց տալին կանոնաւոր միջոցներ շերտապաշտութեան, տարածելն լաւ սերմ,—այս ևս ընկերութեան պարտաւորութիւնը կը լինէր, որի վրա պէտք է ուշ դարձնել: Եւ դրա համար, ինչպէս ասել ենք մի ուրիշ անգամ, պէտք է զլիսաւորապէս դիմել ժողովրդի մէջ գործող և մնացող անձանց, վարժապետներին և այլն: Մասնագիտական ուսումնարանները չը պէտք է նոյնպէս մոռացուին:

Այսպէս, ուրեմն, տուէք գիւղացուն լաւ և մասունքի գներով սերմ, աշխատեցեք տարրացնել գիւղական շրջանում հարկաւոր կանոնները շերտապաշտութեան,— և գիւղացիները կը դադարեն հիւանդ սերմ պատրաստելուց, գիւղացիները կը հետևեն ցոյց տուած միջոցներին, և երկրի շերտապաշտութիւնը կը դարձանայ:—Կովկասը հարուստ է. կովկասցին աշխատասէր է: Այս կողմից միաժամ կարելի է լինել:

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մարտի 14-ին

«Մշակ»-ի № 29-ում մենք մի լուր էինք հաղորդել, որ Գանձակում շուտով մի գինեգործութեան ընկերութիւն կը հիմնվի, որի սրբէկտը և մօտ ժամանակներում կառավարվի Ֆինանսական միւնիստրութեանը՝ ի հաստատութիւն: Հետաքրքրեց լինելով, որ փոքր ի շատէ մեր հասարակական բարձր կեանքի նախնականները մարդկանց համար՝ այդ լուրը ուրախութիւն պատճառով լինի,—մենք չտարած ենք հիմնվելի ընկերութեան մանրամասնութիւնները յայտնելու հետաքրքրել ընկերացեալներին:

Մարտի 2-ին կայացած նիստում, պ. Տէր-Ներսիսեանցի տանը, ընդհանրապէս ժողովը ծանոթացաւ պրոէկտի հիմնական կէտերին հետ և առանձնակի ուշադրութեան առնելով իւրաքանչիւր յօդուածը բացատրեց և կարելի չափ յարմարեցրեց տեղական պայմաններին համաձայն: Հարցը ինքն ըստ ինքեան զօրավար լինելով, ժողովը որոշեց երկրորդ-երրորդ անգամ դաժմարկել, որպէս զի ամբողջ ժողովրդի մէջ արժանաւոր հարցը: Նոյն պարոնի տանը ամսույս 10-ին երկրորդ նիստն է կայանում, և այս անգամ աւելի մարդիկ են ժողովում: Կրկին անգամ կարգաւորում է պրոէկտը և որոշում, որ սպառնալի պրոէկտը ու ցրվի ժողովրդեան մէջ և այլ տեղեր աւելի մօտիկ ծանոթանալու համար, թերեւ յետոյ կարեւորութիւնը զգացվի որ և է մի փոփոխութիւն անելու, որի առթիւ և կը դաժմարկել երրորդ վերջնական նիստը և ի վերջոյ հաւաքական ոյժերով կազմված պրոէկտը կառավարվի ի հաստատութիւն ուր հարկէն է շէնք այդ նպատակաւ ժողովը իր սկզբնական մասն-մասեր ծախսերի որոշեց, որ իւրաքանչիւր մասնակցող հիմնադրել 10 րուբլի վճարէ և դրա համար ընտրեց ժամանակաւոր գանձապահ պ. Մ. Նաբաթեանցին և յանձնեց նրան արդէն կազմած ստորագրութեան ցուցակը: Այժմ իւրաքանչիւր մարդ իր շրջանում խօսում, բացատրում է ընկերութեան օգտակարութիւնը և ընդհանրապէս նկատվում է, որ շատերն են դադարված այդ հարցով: Նիւթաթիւն տաքնասլը, կրիզիսը, որ այժմ տիրում է ամբողջ Գանձակին, կարծես աւելի նպաստում է գործի յառաջդիմութեանը և շատ ժամանակ չի անցնի, երբ մեր Գանձակը կը համոզվի և պահանջ կը դարձնէ իրան համար, որ իր գոյութիւնը իր հողի-երկրի կանոնաւոր մշակութեան հետ է կապուած:

Ընկերութեան նպատակը, ասել էինք, պէտք է լինի տեղական գինիները մշակել և արտահանել Ռուսաստան և այլ երկրներ: Այս բուն նպատակն է, բայց հետևանք պէտք է նպատակէ այդ գինիի կանոնաւոր մշակութեանը ընդհանրապէս, կոնկրետ և ցրահանութեան գործարան: Յայտնի կենտրոններում կոնկրետ իր պահեստները, գործակալները: Այնքանները գլխաւորապէս կազմում են այգետները: Վարչութիւնը կը հիմնվի Գանձակում և օրինասահման կարգով պէտք է իր շրջաբերութիւնները կատարէ: Վերջապէս սրբէկտը տալով իր ցուցակը «Մշակ»-ի յարգելի ընկերացիներին կը ծանոթանանք նախնական, որ հայ մամուլն էլ իր դիտողութիւններով այն ժամանակ կը նպաստէ գործին և հարցի շօշափելի օգտակարութիւնը բացատրելով ըստ ամենայնի խրախուսական հրաւեր կը կարգայ ժողովրդին, չնորհաւորելով նրա ձեռնարկած նոր գործը:

Թէ որքան օգուտներ կարող է տալ այդպիսի մի ընկերութիւնը Գանձակին, այդ ասպարհով կը տեսնվի և անտարակոյս ցաւ կը յայտնվի, որ

վաղուց պէտք էր հիմնած: Բայց երբ, այսօր, ինչպէս ասում են, Գանձակը ոսկորին է հասել: Կարող նկատվում է, որ Գանձակում վաճառականութեան վրա յոյս դնել է կարելի և այդ ծանր տագնապի տակ ծնւթելով՝ երկրի ապահովութիւնը միաւորված ընկերութեան մէջ է որոնվում: Յուսումնասիրելով և ձեռք ձեռքի տուած ջանքերով գնեն միաւորված ոյժերով իրանց, Գանձակ-վոթեան համար: Եթէ այսօր մէկը, երկուսը կարողանում են հարկաւոր տակաւններով գինիներ արտահանել Ռուսաստանի յայտնի կենտրոններում և նրանց յաջողվում է, միթէ մի կազմակերպված ընկերութիւն աւելի չէ կարող գործել,—մինչդեռ նրանք առանձնակի ոյժերով ժամանակաւոր են, այսօր կան, վաղը չը կան,—իսկ ընկերութիւնը մշակական հիմնարկութիւն է: Մինչև երբ պիտի սպասէք շինքները ծածկ, գանձակցիները, որ թիֆլիզի շերտները ձեր դռները կանգնեն ձեր գինիներն առնելու: Ինչ դարձանաւ բան է, երբ որ և է Գանձակեան, խաճակեան կարողանում է գինիներ արտահանել և այդ նրանց յաջողվում է, իսկ դուք դեռ սպասում եք ձեր սրած մուշտաբուն և վերջն էլ աւելի պակաս գնով ծախում ու գանգատվում: «Այս տարի գինի առնող չը կայ, այս անիծած երկրորդին մեր տունը թանգեց, Մարիտը Գիւրջին իմ ձեռքից խլեց, Գարշո, Մարիտի գինին մի առնի, թիֆլիզ է, արի գնանք Կիւրախի տուն, և այլն և այլն...»: Մինչև այսօր այս ձևով գանձակցին ծախել է և ծախում իր գինիները և ոչ մի կանոնաւոր վաճառակ չէ ունեցել: Բայց նրանց՝ որ առատ միւրջ, վառելիք և ընդելէները է ստացել այգիներէ: Չեմ սխալվում, եթէ ասեմ, որ վաղ ժամանակներում այգեգործները շատերը ուրոյն գործի տէր մարդիկ են եղել, դուռ արհեստագործներ են եղել, մրցել չը կարողանալով թողել են իրանց դար-դարգան և մի կտոր հող մշակելով, այսօր այգեգործներ են դարձել, բայց աւելի անխախտանքի դրութեան մէջ են, քան թէ առաջ էին, մինչև անգամ շատերն էլ ունեցած—չունեցածը կորցրել են: Ինչ է այս ամսին պատճառը, այն՝ որ չը գիտէ գանձակցին այգիները կանոնաւոր մշակել, գինիներ պատրաստել և կանառահանել,—մինչդեռ այգիները օրից օր աճում են և այսօր մի պատկառելի թիւ է կազմում, առանց պատկառելի արդիւնքի: Տասը տարին անցնում է, երբ մասնաւոր շրջաններում խօսվում էր ընկերութեան անհրաժեշտութեան մասին, բայց այն ժամանակ աւելի լաւ պայմանների մէջ գտնվելով, նա մասնաւոր վաճառականութեան, չէին համակերպվում, ամեն մէկը իր շահն էր ի նկատի ունենում. իսկ այսօր զգում են, որ իրանց անհոգութեան երեսից մեծ կորուստ են ունեցել և աւելի կոնկրետ, եթէ մի կազմակերպված ընկերութիւն չը հաստատվի: Սակայն ոչինչ,—չլաւ է ուշ, քան երբէք, թող հիմնվի այդ ընկերութիւնը և սկզբից բաւականաչափ միայն նրանով, որ տեղական գինիները մշակէ և արտահանէ յայտնի վաճառատներին: Թող հաւատացած լինեն Գանձակցիք, որ այդպիսի մի ընկերութեանը, որ ակցիաներից պիտի կազմած լինի, ուրիշ քաղաքներէ կը շատ մարդիկ կը մասնակցեն: Յուսանք և սպասենք:

Մենք էլի առիթ կուենանք այս հարցի մասին խօսելու:

Ն. Շահաբեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարտի 17-ին

Վերջին ժամանակներս Բագուի հայ երիտասարդութեան կրթված մասի մէջ երևում են առաջադիմական շարժման նշաններ: Մի տեղում խօսում են, թէ ինչ միջոցներով կարելի է բարձրացնել այս ու այն դասակարգի մտաւոր կարողութեան աստիճանը, միւս տեղ քննում են այն նշանակութիւնը, որ ունի կամ պիտի ունենայ ընկերութեան գրատունը տեղիս հայերի համար: Անցեալ ամիս էլ տեղիս մէջ արհեստավոր լրագրի միջոցով առաջարկում էր նորոգել երկնքն եղած դաստիարակութիւնները: Իսկ օրերումս մի փոքրիկ խումբ երիտասարդների, որ բաղկացած է միջնակարգ և բարձր ուսում ունեցողներից, գրականական երկրորդ էր կարգում, ուր ներկայ էին բազմաթիւ երիտասարդներ:

Բայց սրա նման շարժումները առհասարակ անհետեւում են միւս, եթէ չեն ունենում հաստատ պրոգրամ ու նպատակին հասնելու որոշ միջոցներ: Այսօր մէկը քանի մի դասախոսու-

թիւներ կը կարգայ և կը դադարէ, վաղը միւսը մի քանի անգամ գրական երկերներ կը կազմէ ու կը հեռանայ, յետոյ երրորդները չարչարանքով մի ներկայացում դուրս կը բերեն և նոյնպէս կը դադարեն: Այդպիսով ոչինչ արդիւնք չի ստացվի և եղած աշխատանքն էլ իզուր կը լինի:

Թէ հաստատ պրոգրամ և թէ գործելու որոշ միջոցներ ունենալու համար նախապէս հարկաւոր է բաւականաչափ ծանօթանալ այն հասարակութեան հետ, որի մէջ ենթադրվում է գործել: Ոչապէս գիտենալ թէ տեղս ինչ տեսակ երիտասարդներ կան, սոցալից մօտաւորապէս որքան անդադդանքներ, որքան տարրական ուսում ունեցողներ, որքան միջնակարգ և որքան բարձրագույն կրթութիւն առածներ են, սոցա իր մասը տեսնապէս ապահոված է և իր զօրութեամբ թեմա է օրական հաջը ձեռք բերում, այս ու այն շրջանի մէջ ինչ գաղափարներ են տիրապետում, ինչ ձգտումներ կան և այլն: Իմ ասածը կարելի է իրագործել հետեւեալ կերպով:

Գործել կամեցող երիտասարդները ժողով կը կազմեն, ուր կը հրաւիրվեն քիչ թէ շատ կրթված երիտասարդներ բոլոր շրջաններից: Սոցալից առին մէկը կաշխատէ տեղեկութիւններ հաղորդել ժողովին իր շրջանի մասին: Այդպիսով կարելի է ծանօթանալ տեղեկան հայ համայնքի հետ ընդհանրապէս և երիտասարդութեան հետ մասնաւորապէս: Այն ժամանակ գործելու սկիզբ ունեցող երիտասարդները կը գիտենան թէ ինչպիսի երեւոյթներ, դասախոսութիւններ, հասարակարաց զբոսայիցներ, ներկայացումներ և ուրիշ սոցա նման կրթիչ ձեռնարկութիւններ են հարկաւոր Բագուի հայ ժողովրդի համար:

Առանց մեր ասածի նման նախապէս ուսումնասիրելու, ոչինչ հիմնաւոր գործ չէ կարելի սկսել և դուրս հանել: Գործողները շուտով կիմանան, թէ իրանք այս ինչ գործը սխալ սկսեցին, այն ինչ գործը ուրիշ տեսակ էր հարկաւոր կատարել, և այլն: Մի ժամանակ կան կարծում էի որ եթէ կրթական դարձներ հիմնվեն, բոլոր անդադդեցողները անմիջապէս ներս կը թափվեն, բայց յետոյ իմացայ, որ սխալված եմ եղել, երբ ծանօթացայ մի քանի անդադդեցողների հետ: Մէկ երիտասարդին, որ միայն առանձին բառեր հազիւ կարողանում էր կարդալ, հարցրի թէ կը կամենար արդեօք լաւ կարդալ սովորել: «Որհնված—պատասխանեց նա—էսօր կանք, էգուց չը կանք, փառք Աստուծո, շաբաթի մէջ մի կտոր հաց ենք աշխատում, իսկ կիրակի քէֆ անում, էլ լաւ կարդալ ինչներին է պէտք»: Մի ուրիշ արհեստավոր, որ փոքր կարողանում էր կարդալ, մէկ հեռու գիւղէր գնել (երեւի ստիպմամբ), բայց մէջն էլ չէր նայել: Եւ սորա պատճառը հարցրի: «Է՛հ, էդպէս բաներ սովորեցարի բան է, որ ամբողջ օր պառապ նստի և կարդայ»: Այդպիսի օրինակներից են հասկացայ որ հիմնաւոր կրթական դարձներ ունենալու համար մեծ արդիւնք է առաջադիմական ձգտման բացակայութիւնը անդադդեցողներից: շատերի սրտի մէջ և որ այդպիսիների համար աշխատողը պիտի նստի և առաջ ձգտում գործիցնէ նոցա սրտերում զանազան հարցերով:

Աւելորդ չէ այստեղ նկատել որ գործողները առհասարակ պիտի ի նկատի ունենան նոր սեւերում, որովհետեւ հին սեւերով համար աշխատել միշտ ապարդիւն է լինում և այդ երեւոյթն ունի հողեւանական և ֆիզիոլոգիական պատճառներ: Բայց հենց պատմութիւնն էլ ապացուցանում է իմ ասածը: Ոչ մի երկրում ու ոչ մի ժամանակ տեսնված չէ որ հին սեւերում թէ գիւտութեան և գրականութեան ծաղկելուց, թէ աւանդաբար քարոզներէր օր և է տեսնելի փոփոխութեան ենթարկվել իր ներքին կեանքում: Եւ մեղադրելի էլ չէ: Ահա ձեր առջև 50 տարեկան մի արհեստավոր, նորա ձերմակամաղ թշնմը փոս են մտել, աստիճանի կէտը թափվել է, աշխատելով պակասել է և այլն: Միթէ կարելի է նրանից առաջադիմութեան անհրաժեշտութեան ինքնաձեռնաշուկութիւնը պահանջել: Երբ դուք նրա մօտ ցոյց եք տալիս երիտասարդական եռանդի նշաններ, նա միայն հառաչում է և գուցէ արդուում ձեռք ծաղրում է:

Հիմա խօսենք նամակիս սկզբում յիշված երեւոյթի մասին, որ տեղի ունեցաւ Մարգարիտայի ընկերութեան դահլիճում կառավարութեան թիւղուութեամբ: Մուտքի վճարը 10 կօպէկից մինչև 50 կ. էր: Կարծում եմ որ ներկայ եղողների թիւը 50-ից աւելի էր, որոնք ամենքն էլ երիտասարդներ էին (արհեստավորներ, ուսանողներ, ուսուցիչներ): Ամեն մէկ բաժանումների սկզբում Կարա-Մուրադի խումբը երգում էր ու սպաւ և-

րեւոյ կազմող պարոնները կարդում կամ խօսում էին: Սկզբում պարոններից մէկը կարճ պատմեց Գամառ-Վաթիկայի կենսագրութիւնը և ապա խօսեց բանաստեղծի գործունէութեան մասին: Այս դասախոսութիւնը օգտաւէտ և զաւ ներկայ եղողների այն մասին, որը փոքր ի շատէ ծանօթ է Պատկանեանի գրութեան ներքին, իսկ միւսները, կարծում եմ, ոչինչ չը հասկացան, որպէս երևում էր հենց նրանց երեսները արտայայտութիւնից և միջոցներում իմ ասած հարցութիւններից: Յետոյ կարգաւորեցան ոտաւորներ, գլխաւորապէս Գամառ-Վաթիկայից, որոնցից միայն մի երկուսը հասկանալի էին արհեստավորների մեծ մասին: Բայց, օրինակ, ոտաւորների այնպիսի տեղեր, ինչպէս «Կարդում է նա Morning, Débats, ոչ Բագուից, ah, fi, done!» և սոցա նման ոտանավորներից քիչերը արհեստավորներից կարող են օգտված լինել: «Հիմի էլ լուսնը» և սրա նմանները կատարելապէս անհամ դուրս եկան, որովհետեւ նրանց հետ կապված չէր երևում բուն զգացմունք և չէր էլ կարող երևալ, քանի որ կարգաւորները առաւել խելք, դատողութիւններ էին: Բացի սրանից, կարծում եմ որ այդ տեսակ ոտանավորները ընդունելու համար հարկաւոր է նոյնպէս քիչ թէ շատ զարգացած լինել: Սորա հակառակ Կարա-Մուրադի երգերը լաւ տալարութիւն էին թողնում ամենքի վրա:

Ինձ այնպէս է երևում, որ այդ երեւոյթները զօրւոր թէ կարող են այդպէս շարունակվել որպէս մտադրել են պարոնները, որովհետեւ նախ՝ որ նոցա ձրիաբար չեն, և երկրորդ որ շատ տալաւ գրաւիչ և մեծ մասը համար մատչելի նիւթ ունեն:

Աւելի լաւ չէ, որ աշխատասէր պարոնները չը վաւերեն, և թողնելով դեռ այդպիսի երեւոյթները, բռնեն այն ընկնացը, որ եւ առաջարկել եմ վերևում:

Ս. Թառայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 29-ին Թիֆլիսի դատաստանական պալատում «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու, Փաշա Եղիշարովի և Ասատուր Շարիբեջովի նշանակված գործը չը քննվեցաւ, այլ յետաձգվեցաւ: Երկու վերջին պարոնները չը ներկայանալու պատճառով Չարիբեջովին երբ նրանք չը ներկայացան, թէ և ստացել են գործի մասին յայտարարութիւնը: Պարոններից մէկը մարտի 29-ից մի քանի օր առաջ եկած էր խմբագրատուն և մեր խորհուրդ տուեցինք նրան գործի մասին ճիշդ տեղեկութիւններ ստանալու համար գիտ Սենքերիմ Արծրունու մօտ, որ յանձն է առել օրաշուկանել «Մշակի» խմբագրի գործը պալատում: Բայց ինչպէս երևում է պարոնը չի եղաւ երգուեալ հաւատարմատրի մօտ էլ չը գնաց:

Ինչպէս երևում է «Մշակի» № 35 մէջ տպված Արիպու Ֆելիտտոնը շատ է վրդովեցրել մեր մամուլի երկու ներկայացուցիչներին «Արձագանք» շաբաթաթերթին և «Մեղրու» լրագրին: Առաջինը հանդէս է դուրս գալիս անմեղութեան պաշտպան, այսինքն պ. պ. Գեորգ Աբխազեանցի և Յովհաննէս Չիլիանեանի: Չուր է կարծում պ. Արաբ Գովհաննիսեան որ Արիպին ուղեցել է որ է ստուեր դեղ երկու պարոնների վրա: Մասնաւոր Չիլիանեանի մասին, ինչքան էլ պակասութիւններ ցոյց տուած լինէր, այնու ամենայնիւ վերջը ասված երկու խօսքեր չորպէս մարդ, լաւ մարդ է: Ֆելիտտոնիստը միւս հողաբարձուներից ոչ մէկի մասին ասած էլ չէ: «Արձագանքի» խմբագիրը կարծում է որ այն իրողութիւնը թէ «Մշակի» առաջարկած 14 կանդիդատներից միայն 3 հոգի հողաբարձու ընտրվեցան, ցոյց է տալիս թէ «Մշակը» մեծ ժողովրդականութիւն չունի մեր հասարակութեան մէջ: Բայց պ. Յովհաննիսեան մոռանում է թէ մեր առաջարկած կանդիդատներից շատերը հրաժարվեցան ջուշարկելուց: Եթէ Կարապետ Մովսիսեան, Գաբրիէլ Մուրադեան, Սենքերիմ Արծրունի և բժիշկ Բագրատ Նաւասարդեան համաձայնվէին ջուշարկելու,—մենք հաւատացած ենք որ Արաբ Գովհաննիսեանից պակաս ձայներ չէին ստանայ և դուցէ մի ձայն էլ աւել: Այն ժամանակ պ. Յովհաննիսեան հողաբարձու չէր լինի, այլ կը մնար կանդիդատ: Այն ժամանակ 12 հողաբար-

ձուներկից 7 հոգի մեր առաջարկածները կը լինէին: Ուրեմն այստեղ մեր ժողովրդականութեան լինելը կամ չը լինելը, երբ իրանք մարդիկ հրա- ժարեցին, ոչինչ դեր չէ խաղում: Կուզենայինք տեսնել ինչ ժողովրդականութիւն կունենար պի- ցովհանիստեան մեր հասարակութեան մէջ, եթէ 25 հատ այլ և այլ պաշտօններ չունենար, որոնց պատճառով մարդիկ կապված են նրա հետ նիւ- թագէտ, և միմիայն «Արձազանքի» խմբակի լի- ներ: Ինչ որ վերաբերում է այն կըրտո խօսքին, թէ «Մշակը» կամ Գրիգոր Արծրունի բարոյագէտ թուլացում են հայոց եկեղեցին, դա պ. Արքայ Գովհանիստեանի կողմից նշանակում է ուրիշների ասածները չը մտացած կերպով կրկնել, կամ ճա- րհաստով ճին դարձանք քառու տալ: Չենք կար- ծում որ այն լրագիրը, որ Ներսէսին կամ Նորի- նիսին էր պաշտպանում, որ առաջարկում էր 13 տարվայ ընթացքում քահանաներին ուժիկներ նշանակել, որ պաշտպանում էր հոգևորականների մարդավայել, քաղաքացիական իրաւունքները, որ առաջարկում էր հանդուցեալ Գեորգ կաթողիկո- սին աւետարանը աշխարհաբաս թարգմանել և կաղմը հայ-լուսաւորական միաբնակարան ըն- կերութիւն, կրօնափոխութեան առաջն առնելու, որ ուղում էր հայտնեցնել այլաբաններին լուսա- ւորական եկեղեցու հետ և այն միտքն էր յայտ- նում թէ քրիստոնեաներին վայել էլ, անհետաքե- րան է հալածել իրանց աղգակից այլաբաններին: —որ այդ տեսակ լրագիր կարող է համարվել մի թերթ որ եկեղեցու նշանակութիւնը բարոյա- պէս նուազեցնում էր: Կարծեմ որ աւելի բար- ծացնում էր, քան թէ դուք ամենքդ, յարգելի պարոններ: Պ. Գովհանիստեանը գտնում է որ Եւ- րոպայում կարելի է գրել Արիստո. պէս Ֆելիք- տօններ, բայց դրա համար տաղանդ է հարկա- ւոր: Սրա կամ նրա մէջ տաղանդ գտնել կամ չը գտնել—ճաշակի բան է: Նոյն բանը կարող ենք ասել և իրան պ. Գովհանիստեանի մասին, որ «Արձազանք» շարաթղթերի պէս մի թերթ Եւ- րոպայում դուք է և հրատարակում է, բայց դրա համար տաղանդ է հարկաւոր: Ինչ որ վերաբե- րում է «Մեղրու» պատառական խրատներին, նրանց մասին իսկապէս չարժէք էլ խօսել: Այդ ձև կերթայ, պ. Սիմեոնեանց, եթէ լրագիրը պէտք է լուս մնայ հասարակական որ և է պա- կասութեան մասին, որովհետեւ այս կամ մի- մարդու հետ խմբագիրը բարեկամ է: Այդ ժայն դուք էք անում այսպէս և արել էք ձեր գործու- նէութեան ամբողջ ընթացքում, այդ պատճառով էլ ձեր լրագիրը, և ձեր լրագրին նման ուրիշ Լը- րագիրները վերին աստիճանի անբարոյակամաց- նող են: Որովհետեւ մի ժամանակ Արքայ Գով- հանիստեան ուղում էր անել կամ նոյն իսկ արած էլ լինէր մեծ ծառայութիւն Գրիգոր Արծրունուն, որովհետեւ այդ վերջինը համե- րալի էր նրա հետ Ներսէսին ընտրելու ժամա- նակ և ինքն հրաժարվել թիֆլիսի պատգամաւոր քուէարկվելուց Գովհանիստեանուն բացարձակ քուէ տալով—այդ պատճառով հիմա «Մշակը» այլ ևս երբեք չը պէտք է դիպէր Գովհանիստեանուն: Բարոյական լոգիկա է: Կարծեմ մի ժամանակ երբ նոր սկսեցինք հրատարակել «Մշակը», դուք շատ վերցված էիք թէ ինչպէս մենք հա- մարձակվում ենք անխնայ քննադատել ձեր փոած մտքերը, մոռանալով որ «Մշակի» խմբագիրը 13 տարեկան մանուկ եղած ժա- մանակ ձեզ մօտ հայերէն լեզու էր սովորում: Այդ տեսակ բարոյական լոգիկայով ապահով կե- րպով կարող էք գնալ Բիւրմանիա, Տիբեթ, կամ սը- րանց նման այլ նահապետական, ստրկական եր- կիրները:

Ստացանք Ս. Պետերբուրգից «Женские Бра- чебные курсы» Я. Абрамова, գրքիկը, ռուսե- րէն լեզուով: Այդ գրքիկը վերին աստիճանի հե- տադրբեր է իր բովանդակութեամբ և յոյս ունենք մի այլ անգամ նրա մասին խօսելու:

«Հիւսիսային գործակալութիւն» հաղորդում է հետեւեալ: «Новое Время» լրագիրը հաղորդում է այն պրօէկտի գլխաւոր կէտերը, որ կազմված է վերադարձութեան պարտաւորութիւնից հրե- աների խուսափելու մասին: Գիտաւորութիւն կայ նշանաւոր, կերպով սահմանափակել վերադար- ղութեան մի շրջանից մի այլ շրջան անցնելու իրաւունքը և այնպիսի շրջան անցնելը, որ հրեա- ների մշտնապահութեան գաւառներից դուրս է գալիս, կը պատժվի ընտանեկան դրութեան վերաբերեալ արտօնութիւնների կորուստով: Պահանջել հրեաներից, նրանց առևտրական և

արդիւնադրական վկայականներ տալու ժամա- նակ, որ նրանք ներկայացնեն վկայականներ թէ արդէն կատարել են վերադարձութեան պար- տաւորութիւնը, կամ թէ ազատվել են այդ պար- տաւորութիւնից վիճակով: Նիթարիկ հրեաներին, որոնք ժամանակաւորապէս արձակումն են ստա- ցել, յանկարծակի բռնկական ընտրութեանը: Նի- թարիկ 300 բուրու տուգանքի փոխարէն պա- տասխանաւորութեամբ հրեական այն ընտանիքնե- րին, որոնց անդամները խուսափել են վերադար- ղութիւնը կատարելուց: Այն անձանց, որոնք մասնացոյց կանեն վերադարձական պարտաւորու- թիւնից խուսափող հրեայի ուր լինելը, պարգևել 50 բուրու վարձատրութիւն»:

ՏԱԹԵԻՒՅՑ մեզ հաղորդում են, որ Տաթևի վան- քին պատկանող կալուածները շատ անխնայ դը- րութեան մէջ են:

Ամսիս 30-ին Թիֆլիսի ժողովարանում կայացաւ փոխադարձ կրեդիտի ընկերութեան տարեկան ընդ- հանուր ժողովը, զինելու և հաստատելու ընկերու- թեան հաշիւները, ընտրելու մի դիրեկտոր և մի քանի անդամներ խորհրդի և քննողական յանձնա- ժողովի համար:—Վերջիկտորի պաշտօնի համար վերընտրվեցաւ պ. Բաբանեան 541 ձայնով ընդ- դէմ 110 ձայնի:—Նիստի ժամանակ մի քանի մե- ները հարց բարձրացրին, թէ ինչու խորհուրդը չի առաջարկում ընդհանուր ժողովի ընկերութեանը 15 անձինքների յայտարարութիւնը, որով նրանք ա- ռաջարկում են ընկերութեան դուռ արդիւնքի 20/0 յատկացնել բարեգործական նպատակի: Խորհրդի տուած բացատրութիւնը հետաքրքրական էր: Յայ- տարարութիւնը տուած է եղել ժամանակին, այսինքն ընդհանուր ժողովի կայանալու օրից մի ամիս ա- ռաջ: Խորհուրդը իր նիստի մէջ «սկզբունքով հա- կուած է լինելու» այդ յայտարարութեան մարին, վճռել է ներկայացնել ընդհանուր ժողովին, որը կարող էր և դրական վճիռ տալ:—Անցնում է մի քանի օր և յայտարարութիւնը ստորագրողնե- րից երկուսը յայտնում են, որ իրանց ստորագ- րութիւնից յետ են կանգնում:—Չը լինի թէ այդ երկու անձանց վարժուող կապ ունի խորհրդի «սկզբունքով հակառակ լինելուն»: հետ: Խորհուր- դը բացատրեց կանոնադրութեան հիման վրա որ, որովհետեւ այդ հարցը իր ժամանակին չէ յայտա- րարված ընդհանուր ժողովին ենթարկվելի միւս հարցերի հետ, ինչպէս պահանջում է կանոնա- դրութիւնը, ուստի և այդ հարցը այս ընդհանուր ժողովը դրականապէս վճռել չէ կարող: Բայց թէ ինչու չէր յայտարարվել—յայտնի չէ: Ընդհանուր ժողովը խորհրդի չնորհի. նեղ դրութեան մէջ ընկ- նելով և չը կամենալով կանոնադրութեան դէմ գործել, վճռեց այդ 15 անձանց առաջարկու- թիւնը ներկայացնել միւս տարուայ ընդհանուր ժողովին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՂՊԱՐԻԱ

Հեռագիրը լուր բերեց, որ Կ. Պոլսում գտնաւոր- ված դեպքաւորութիւնը, 45 բողոքի տոնողութեամբ նիստ կազմելով վերջ տուեց իշխան Ալէքսանդրի վերջին ցանկութեանը: Պետութիւնների ներկայա- ցուցիչները ստորագրեցին իշխան Ալէքսանդրին հինգ տարով Արեւելեան-Բուսիլայի գնահատա- հանգապետ նշանակելու արձանագրութիւնը: Բայց արքեպիսկոպոսի Բաղդադեան թերակղզու ինդրին վերջ ահ է տը արկեցաւ: Եթէ իշխան Ալէքսանդր իր վերջին պահանջը յայտնած չը լինէր, և չը կա- մենար նշանակվել անպատճառ ան որ ոչ ժ մ մ ա- ն ա կ ո Վ գնահատաւորապէս Արեւելեան Բու- սիլայի, Բաղդադայի միութեան ինդրի գէթ ժա- մանակաւորապէս խաղաղութեան ճանապարհի վրա կը դրվէր: Այն ժամանակ կը մնար միայն Գունաստանի պահանջների գործը վերջացնել: Սակայն Բաղլանի գործերը երբեք այնքան անու- ռոշ դրութեան մէջ չէին դրված սեպտեմբերի 18-ի յեղափոխութիւնից յետոյ, որքան այժմ, դեպքաւորութիւնի այդ միաձայն որոշումից յետոյ: Հարցը վերջացած կարելի էր համարել, ի հարկէ, եթէ իշխան Ալէքսանդր այնքան կտոհմութեամբ չընդգրկմանար միւս և վերջին կէտը եւրոպական պետութիւնների առաջարկութեանը: Եթէ, յիշուի, իշխան Ալէքսանդրի վերջին ցանկութիւնը ուղղել արձագանք էր բաղարական ժողովրդի ունեցած ցանկութեան, եթէ իր վերջին պահանջով իշխանը միմիայն ազգի կամքի առաջն էր խնայարկում,

այն ժամանակ հաստատ կարելի է ասել, որ Սեր- բիային յաղթող Բաղարական երբեք գոհ չի լինի դեպքաւորութիւնի վճռից: Իսկ եթէ իշխան Ալէք- սանդր իր վերջին պահանջով արտայայտում էր իր անձնական ցանկութիւնը, արտայայտում էր քաղաքացիական մի հեռատեսութիւն, որի մա- սին որոշ գաղափար Արեւելեան-Բուսիլայի հանդի, այն ժամանակ իշխան Ալէքսանդրի դրութիւնը անձնականապէս շատ խախտող կը լինի: Անկաս- կած երկար չենք սպասի տեղեկութիւններին, որոնք մեզ կը հասնեն հեռագրի միջոցով: Այդ լուրը մի նոր և անսպասելի բան չի լինի: Գեպքաւորութիւ- լի վճիռը վերջ կը տայ բաղարական ինդրին, եթէ ազգը իրան գոհացրած համարի: Եւ ապա մնում է իշխան Ալէքսանդրին, կա մ ի ո ռ ն ա ը հ- վ է լ այդ վճիռ առաջ, մոռանալով իր անցեալ պահանջները, և կամ հ ր ա ժ ա ը վ է լ Բաղարական գահից:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Անդրկական կառավարութիւնը կազմեց մի յանձ- նաժողով բժշկներից և գիտնականներից, որը պէտք է ընէ կատարած կենդանիներից կծուած- ների Պատեհորի բժշկելու եղանակը: Այդպիսով ամբողջ Եւրոպայի շտապում է օգուտ քաղել Պատ- տեհորի գիւտից:

1886 թի մարտի 22-ին Գերմանիան տօնեց Վիլհել- մի կայսրի ծննդեան օրը: Այդ օրը կայսրի 89 տարին լրացաւ: Ոչ միայն գերմանական պատմութեան մէջ, այլ և եւրոպական տրութիւնների թագա- ւորների մէջ շատ քիչներ կան, որոնք այդ տա- րիքին հասած լինէին: Վիլհելմի կայսրը չը նայած իր հասակին, այժմ էլ դեռ տաղը է և ունի լու- լիջողութիւն: Վեր - է կենում քնից առաւօտեան ժամի 6 1/2-ին: Հագնվում է միանգամից, առանց հողաթիւնների և «խալաթ» գործածելու: Բժշկին ընդունելուց յետոյ նախաճաշում է: Կայ- րում է լրագիրները և նամակները: Ժամի 9-ից արդէն սկսում են ներկայանալ կայսրին: Ներկայա- նում են առաջ պաշտօնական անձինքը, յետոյ մասնաւոր ինդրատուները: Ժամի 2-ին Վիլհելմը գնում է զբօսնելու: Ժամի երեքին ամենայն օր տեսնում է կայսրի հետ իշխան Բիւրաւիլը: Զա- շում է ժամի 4—5-ը: Զաւից յետոյ կայսրը աշ- խատում է իր գրասենեակում: Ժամի 8-ին զբաղ- վում է որսի խօսակցութիւններով մերձակորների հետ: 8-ին գնում է թիատրում: 9-ին կամ 10-ին խմում է ընտանիքի հետ թէյ: Փոքր ինչ յետոյ պառկում է քնելու:

Օրերումս մեռաւ Բերլինում գրականութեան մէջ յայտնի պատմագիր Դոմիտի:

Խաղաղութեան հարցը են մի նոր գործիք, որ կրում է «գաղափար»—կարեւորեցնայ» անունը: Երբ խաղաղութեան այդ գործիքը վրա բերահանի, Բախի կամ Դարաւուսի հեղինակութիւններից յայ- տնի կտորները, կարեւորեցնայ, որը կապ ունի դաշնամուրի հետ, կարում է օձիք, թիքեր և կա- նանց հագուստի ուրիշ պարագաներ:

Ս. Պետերբուրգում գոյութիւն ունեցող «խոհա- րարներին օժանդակող» ընկերութիւնը ունի ներ- կայումս, ինչպէս հաղորդում են լրագիրները, ար- դէն 250 անդամ: Իսկ Թիֆլիսում գոյութիւն ու- նեցող հայոց միակ «Բարեգործական» ընկերու- թեան անդամներ թիւը այս տարի 200-ի էլ չէ հասել:

Խաղաղութեան Բերնարդինի անունով մի պարսի այժմ կազմում է երկրագնդին բոլոր լրագիրների և ամառադիրների ցուցակը, որի մէջ նկարագրված կը լինի իւրաքանչիւր հրատարակութեան պատ- մութիւնը, նրա նշանակութիւնը, խմբագրի և դը- խաւոր աշխատակիցների համալուծ կենսագրու- թիւնը: Գիւրքը կը կրի հետեւեալ վերնագիրը. «Dizionario di tutti i giornali del mondo». Հեղի- նակը իր աշխատութեան համար արդէն ձեռք է բերել այս 10,000 հատ մի և այլ լեզուներով հրատարակվող լրագիրներ և ամառագիրներ: Պ. Բերնարդինի դիմում է աշխարհի բոլոր հրատա- րակիչներին և խնդրում է որ ուղարկեն իրան մի մի համար իրանց հրատարակութիւններից, այդ հրա- տարակութիւնների վերաբերեալ անհրաժեշտ տե- ղեկութիւններով միասին: Բերնարդինի հասցէն այս է. Lecce (Italia) via delle Bombarde, 27.

Սուէդի ջրանցքի կառուցանող Ֆերդինանդ Լըսէպս, յայտնեց որ Պանամայի ջրանցքը պատրաստ կը լինի 1889 թին:

Կաթիլի կղերականութեան բարձր շրջաննե- րում միտք է ծագել պապի աթոռը Հռոմից տեղափոխել Եւրոպայէ: Եթէ այդ լուրն ուղիղ է, պէտք է ենթադրել որ ինքն կաթիլիութիւնը սկսում է համոզվել թէ շատ հաստատ ապագայ այլ ևս չունի Եւրոպայում և իր գործունէութեան կենտրոնը այժմուհետ դառնալու է Ասիայ, ու- լեմն այդտեղ աւելի յարմար է տեղափոխել և եկեղեցու դուռն ներկայացնող պապի աթոռը:

Նորբերումս Լոնդոնում կայացաւ «պարգաւեր կանանց» ժողովը: Խօսվեցաւ այն միջոցների մա- սին, որը ձեռք է առել ընկերութիւնը ցոյց տա- ւու կանանց հազուադէպի շէնքերի, տունիկանե- րի և այլ աւելորդ ձևերի անմոտութիւնը և աւե- լորդ լինելը: Մօղային կերպով հագնվող կանանց սեղանված իրանը թէ մնասում և արգելում է կա- նանաւոր մարտդութեանը և ազատ շարժունը- ներին, և թէ անկարելի է դարձնում կանանց զբաղվելու մի քանի տեսակ պարագաները: Ընկերութիւնը միանգամայն ընդդէմ է այն բոլոր- լին, ինչ որ չափազանց է, անբնական է, և դարձնում է կոռուք մի խաղալիք:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մարտի: Հաղորդում են, որ կալուածական բանկերը ստացան Ֆինանսական մինիստրի չրջաբերականը, որով նրանց հրամանա- գրվում է առաջնորդել չրջաբերականի մէջ ցոյց տուած կանոններով ազնական բանկի մէջ անցկաց- րած կալուածների գրաւականների որոշված պայ- մանաժամից առաջ հանգցնելու մասին: Պարտքը գրաւական թղթերով հանգցնելու ժամանակ պէտք է յետ դարձնել փոխառուին ընթացող կէս տարվայ կուպոնը, իսկ նաղը փողով հանգցնելու ժամա- նակ, չը հաշվել աւելորդ պրօցենտներ, եթէ հանգ- ցնելը կատարվում է յոճակարի, փետրվարի, մար- տի, ապրիլի, օգոստոսի, սեպտեմբերի և հոկտեմ- բերի ընթացքում: Իսկ եթէ հանգցնելը կատարվե- րու է մայիսի, յունիսի, նոյեմբերի և դեկտեմբերի ընթացքում, պէտք է նաղը դրամով ներկայացրած դուրաների վրա 2 1/2% հաշու 48 տարով և 8 ամսով արած փոխառութիւնից, կամ 3% այն փո- խառութիւնից, որ արած է 43 տարով և 6 ամսով: Մի և նոյն ժամանակ առաջարկված է կալուածական բանկերին կատարել տիրաժներ միակերպ 1-ին մայիսի և 1-ին նոյեմբերի և միացնել տիրաժային ֆոնդերի հետ ոչ թէ միայն մտքեած հանգցնող վճարներ, բայց և այնպիսիներ, որոնք աղնական բանկի տուած տեղեկութեան համեմատ, մտցնվե- րու են մայիս, յունիս, նոյեմբեր և դեկտեմբեր չորս ամիսների ընթացքում և որոնցից, այդ դէպ- քում, նոյնպէս հարկաւոր չէ պահանջել աւելորդ պրօցենտներ:

ԼՈՆԴՈՆ, 29 մարտի: Համայնքների ժողովի նիստում Գլադստօն մի ճառ ասեց, որ անց 3 1/2 ժամ և որի մէջ նա բացատրեց իր պրօէկտը իր- լանդիայի համար կատարվող լեֆօրմների մասին, պարլամենտի հաստատութեան և նրա գործունէու- թեան մասին: Գլադստօնի մտքով, իրլանդիան ներկայացուցիչներ չի ունենայ անգլիական պար- լամենտում, եթէ միայն ներկայ պրօէկտը որ և է փոփոխութեան չնիթարկվի: Իրապէս իրլանդական պարլամենտը, ծրագրին համաձայն, բաղկացած կը լինի երկու բաժիններից: Առաջինի կազմակեր- պութեան մէջ կը մտնեն պէրերը և 75 ներկայա- ցուցիչներ, որոնք ընտրված կը լինեն նոր ընտրո- ղական սխառնայով, իսկ երկրորդ բաժինը բաղ- կացած կը լինի 103 ներկայացուցիչներից, որոնք ընտրված կը լինեն այժմեան ընտրողական եղա- նակով: Երկու բաժիններն էլ միասին կը խորհ- րակցեն, իսկ ձայնատուութեան անել կարող են միմեանցից ջով: Իրլանդական պարլամենտին չէ լից յարվում խառնվել տէրութեան արտօնու- թիւնների մէջ և այն գործերի մէջ, որոնք վերա- բերվում են զօրքին, նաւատորմին, գաղթականու- թիւններին և արտաքին քաղաքականութեանը, նոյնպէս նրան իրաւունք չէ տրվում վերահսկել մաքսային և ակցիզային հարկատուութեան, առե- տուրի, նաւագնացութեան, թղթադրամի չրջանա- ռութեան իրաւասութեան վրա: Իրլանդական պարլամենտը իրաւունք չունի հրատարակել իր սեկիական պետական եկեղեցի, և նրա պահպա- նութեան համար իրաւունք չունի առանձին գու- մարներ նշանակել: Կայսերութեան ընդհանուր պետական ծախսերի համար իրլանդիայի կազմից վճարվող հարկի չափը առաջնաինը պահպանու- է մինչև 1/15: Պատերազմական ծախսերի վրա իր- լանդիան ոչինչ վճարելու չէ: Այդ բիլը իր հու- թեան մէջ Պարնէլը բաւականացուցիչ է համա- րում, աւելացնելով միայն որ անհրաժեշտ է մի քանի փոփոխութիւններ անել ընդհանուր ծրագրի մէջ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մարտի: Այսօր առաւօտեան վերադարձաւ այստեղ ճանապարհների հաղորդակ- ցութեան մինիստրը: Պետերբուրգի դուռն որո- չեց տալ իւրաքանչիւր տարի 15 հաղար բուրու նպաստ իրական բժշկական կուրսերին քանի

